ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աղքատության վիճակագրության վերաբերյալ

Գործողություն 4.4: Տարեկան տվյալների արդյունքների վերանայում

Առաքելության փորձագետներ

Պրն. Յարլ Քուիթզաու, Փորձագետ, Դանիայի Վիճակագրություն
Պրն Վելի-Մաթթի Տյորմելետո, Փորձագետ, Ֆինլանդիայի վիճակագրություն

2017 թ. ապրիլի 3-7

Վերջնական տարբերակ

National Statistical Service
Republic of Armenia

Փորձագետների կոնտակտային տվյալներ

Յարլ Քուիթզաու
Դանիայի Վիճակագրություն
Սեյրոգադե 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ. +45 28123707
Էլ-փոստ. JAQ@dst.dk

Վելի-Մաթթի Տյորմելետո
Ֆինլանդիայի վիճակագրություն
Työpajankatu 13
00022 Ֆինլանդիայի վիճակագրություն
Հելսինկի, Ֆինլանդիա
Հեռ. ՝+358405063161
Էլ. հասցե ՝veli-matti.tormalehto@stat.fi

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Գնահատում և արդյունքներ 4
3. Եզրակացություններ և առաջարկություններ 144
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 148
Հավելված 2: Առաքելության ծրագիր 18
Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ 22

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական միություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ԵՄ-ԵԿՊՎ	Եկամուտի և կենսապայմանների վիճակագրություն (Եվրոստատ)
ՆՁ	Նյութական զրկվածություն
ԱՍԲՌ	Աղքատության կամ սոցիալական բացառումների ռիսկում
ՏՏԿԱՀ	Հայաստանի Եկամուտների և Կենսապայմանների հետազոտություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Առաքելության վերաբերյալ սույն հաշվետվությունը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա 4-րդ բաղադրիչի չորրորդ առաքելությունն էր, որի գործողություններն իրականացվել են առաքելության ծրագրի ժամանակացույցի համաձայն:

Առաքելության նպատակներն էին

- Տարեկան արդյունքերի վերլուծություն
- Տվյալների որակի ուսումնասիրում
- Հարցաթերթիկի ուսումնասիրում
- Ցուցանիշների նույնականացում
- Քննարկում հրապարակման և տարածման վերաբերյալ
- Համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավում քննարկումներում

Նախատեսված գործողությունները և ակնկալվող բոլոր արդյունքները իրականացվել են:

Փորձագետները կցանկանային իրենց անկեղծ երախտիքը հայտնել բոլոր պաշտոնյաներին և անհատներին Հայաստան կատարած այցի ընթացքում աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, ինչը մեծապես նպաստել է իրենց աշխատանքին: Սույն զեկույցում տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են փորձագետներին և պարտադիր չէ, որ դրանք համընկնեն ԵՄ, ՀՀ ԱՎԾ, Ֆինլանդիայի և Դանիայի վիճակագրական ծառայությունների կարծիքների հետ:

2. Գնահատում և արդյունքներ

ԵՄ նյութական զրկվածության ցուցանիշները

Թվինինգ ծրագրի Աղքատության վիճակագրության բաղադրիչի առաջին առաքելության ընթացքում, որը տեղի է ունեցել 2015 թ.-ի սեպտեմբեր ամսին, պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ սոցիալական բացառումների վիճակագրության մշակումը Հայաստանում պետք է կենտրոնանա տվյալների հավաքագրման վրա, որոնք անհրաժեշտ են ԵՄ ԵԿՊՎ նյութական զրկվածության ցուցանիշների համար: Նյութական զրկվածությունը ԵՄ –ի աղքատության չափման ԱՍԲՌ-ի երեք բաղադրիչներից մեկի անվանումն է, մարդիկ, որոնք գտնվում են աղքատության կամ սոցիալական բացառումների ռիսկում: Երկու մյուս

բաղադրիչները հետևյալն են՝ <<Եկամուտների աղքատության հարաբերական ռիսկում>> և <<ցածր աշխատանքի ինտենսիվություն>>: Հայաստանում կարող են հաշվարկվել մի քանի ռեսուրսների վրա հիմնված աղքատության ցուցանիշներ (եկամուտ, սպառում) և Հայաստանի ՏՏԿԱՀ-ում առկա են նաև աշխատաշուկայի ընդգրկման վերաբերյալ տվյալներ: Հետևաբար, ուշադրությունը կենտրոնացվեց միայն նյութական զրկվածության վրա:

ԵՄ նյութական զրկվածության ցուցանիշները նախատեսված են ներառելու կենսապայմանների որոշ հիմնական ասպեկտներ, որոնք բնորոշ են ողջ ԵՄ-ում և որոնցից որոշ մարդիկ բացառվել են ռեսուրսների սղության պատճառով: ԵՄ-ում, ռեսուրսների պակասը չափվում է եկամուտի աղքատության ռիսկի հարաբերությամբ, որի շեմը սահմանված է միջին հավասարեցված տնօրինելի եկամուտի 60 տոկոսի չափով:

ԵՄ նյութական զրկվածության ցուցանիշը վերջերս վերանայվել է և քննարկումները գործնական կիրառման վերաբերյալ դեռևս շարունակվում են (իրավիճակը 2017 թ. ապրիլի դրությամբ): Ներկայիս <<հին>> նյութական զրկվածության ցուցանիշը մշակվել է 2000-ականների կեսերին, սակայն դիտարկվում էր, որ այն ուներ չափազանց սահմանափակ թվով կետեր, որոնցից որոշներն էլ բավականին կայուն չէին: Հին ցուցանիշներում առկա էին ինը կետեր (առարկաներ) և դրանք բոլորն էլ չափվում էին տնային տնտեսության մակարդակում:

Զրկվածության փոփոխականների ընդլայնված փաթեթը հավաքագրվել է 2009 թ. ԵՄ-ԵԿՊՎ-ում և նոր վերանայված ՆԶ ցուցանիշները հիմնված են այս տվյալների վավերացման ուսումնասիրության վրա[1]: Առարկաների վերջնական ցանկը բաղկացած է այնպիսի փոփոխականներից, որոնք անցել են համապատասխանության, վավերացման, հուսալիության և Եվրոպական տվյալների ավելացման փորձարկման թեստերը: Արդյոք նույն փոփոխականները Հայաստանի տվյալների պետք է անցնեն այս թեստերը թե ոչ, այս Թվինինգ ծրագրում չի ուսումնասիրվել, սակայն կարևոր քայլ կհանդիսանա Հայաստանի սոցիալական բացառումների տվյալների հետագա վերլուծություններում:

Մասնավորապես, պետք է ուսումնասիրվի առարկաների *համապատասխանությունը* Հայաստանի համատեքստում: Համապատասխանությունը վերաբերվում է նրան, որ պետք է ստուգվի արդյոք քաղաքացիները (նաև բնակչության տարբեր ենթախմբեր) համարում են դրանք անհրաժեշտ առարկաներ մարդկանց համար՝ Հայաստանում ընդունելի ստանդարտ կենսամակարդակ ունենալու համար: Այլ կերպ ասած, հարցը կայանում է նրանում, թե արդյոք կոնկրետ որևէ ԵՄ-վավերացված զրկվածության առարկա նաև արտացոլում է ցածր կենսամակարդակ Հայաստանի համար և այստեղ նույնպես այն

[1] <<Նյութական զրկվածության չափումը ԵՄ-ում. Ցուցանիշներ ամբողջ բնակչության համար և երեխաներին բնորոշ հատուկ ցուցանիշներ>>: Եվրոստատի մեթոդաբանությունը և աշխատանքային փաստաթղթեր, 2012 թ. հրատարակություն:

դիտարկվում է որպես անհրաժեշտություն: Նաև պետք է ուսումնասիրել, թե արդյոք ՏՏԿԱՀ պարունակում է այլ առավել հարմար փոփոխականներ, որոնք կարող են օգտագործվել Հայաստանում ՆՁ ցուցանիշներ կազմելու համար:

Ստորև ներկայացված աղյուսակում պատկերված է հին և վերանայված նյութական զրկվածության փոփոխականների ցանկը: Յուրաքանչյուր կետի համար <<Ոչ (չի կարող իրեն թույլ տալ)>> պատասխանը, կամ <<Ոչ, քանի որ չի կարող իրեն թույլ տալ>> օգտագործվում է ցուցանիշի համար, այսինքն միայն տվյալ առարկայի հարկադրված բացակայությունն է համարվում զրկվածություն: Եթե անձը/տնային տնտեսությունը պարզապես չունի տվյալ առարկայի կարիքը այլ պատճառներից ելնելով, ապա դա չի համարվում զրկվածություն:

Աղյուսակ. Եվրոստատի նյութական զրկվածության փոփոխականների ցանկը հին (9 կետեր) և նոր (13 կետեր) ցուցանիշներ

Ներկայիս (<<հին>>) նյութական զրկվածության կետերը (9)	**Վերանայված (<<նոր>>) նյութայան զրկվածության կետերը (13)**
Տնային տնտեսության մակարդակում	
• անսպասելի ծախսերի հաղթահարում;	• անսպասելի ծախսերի հաղթահարում;
• Մեկ շաբաթյա ամենամյա արձակուրդ տանից դուրս	• Մեկ շաբաթյա ամենամյա արձակուրդ տանից դուրս
• Խուսափել պարտքերից (հիփոթեքային կամ վարձակալության, կոմունալ վճարներից կամ ապառիկով ապրանքների գնման մարումներից)	• Խուսափել պարտքերից (հիփոթեքային կամ վարձակալության, կոմունալ վճարներից կամ ապառիկով ապրանքների գնման մարումներից)
• սնունդ մսով, հավով, ձկով կամ համարժեք բուսակերային կերակուր յուրաքանչյուր երկրորդ օրը	• սնունդ մսով, հավով, ձկով կամ համարժեք բուսակերային կերակուր յուրաքանչյուր երկրորդ օրը
• Տունը պահել բավարար տաք ջերմաստիճանի ներքո	• Տունը պահել բավարար տաք ջերմաստիճանի ներքո
• Անձնական ավտոմեքենա	• Անձնական ավտոմեքենա
• լվածքի մեքենա	•Տնային տնտեսությունը չի կարող իրեն թույլ տալ փոխարինել մաշված կահույքը (սակայն կցանկանար ունենալ)
• գունավոր հեռուստացույց	
• հեռախոս	
Անհատական մակարդակում	
	• Փոխարինել մաշված հագուստը որոշ նորերով (ոչ երկրորդ ձեռքից)
	• Երկու զույգ համապատասխան կոշիկներ, ներառյալ մեկ զույգ կոշիկ բոլոր եղանակների համար

	• Ծախսել մի փոքր գումար ամեն շաբաթ ինքն իր համար, առանց որևէ մեկի հետ խորհրդակցելու
	• Հավաքվել ընկերների/ընտանիքի անդամների հետ խմելու/ուտելու համար առնվազն ամսեկան կտրվածքով
	• Ունենալ կանոնավոր ժամանցի միջոցառումներ
	• Ունենալ ինտերնետ կապ

ՆԶ ժամանակավոր մուդուլը նոր կետերով հավաքագրվել է կրկին 2013, 2014 և 2015 թվականներին: 2016 թվականից ի վեր հավաքագրվում են վեց նոր կետեր տարեկան ԵԿՊՎ հետազոտության միջոցով և երեք հին կետեր հանվել են:

Դեռևս անորոշություն կա, թե արդյոք ինտերնետ կապի հարկադրված բացակայությունը պետք է ներառվի այս ցանկում թե ոչ, և արդյոք դա լինելու է տնային տնտեսության, թե անհատական մակարդակում: Ելնելով այն տեղեկատվությունից, որոնք ստացել ենք ԵՄ-ԵԿՊՎ աշխատանքային խմբի հանդիպումների քննարկումներից (որոնք նույնպես տեղի են ունենում տարվա այս ժամանակահատվածում՝ ապրիլի 3-4), ինտերնետ կապը պետք է ներառվի անհատական մակարդակում: Այս իսկ պատճառով սույն զեկույցում այն ներառված է որպես կետ: Սակայն, ինչպես բացատրվեց քիչ ավելի ուշ, դա պետք է կիրառվի տնային տնտեսության մակարդակում:

ԵՄ-ի ՆԶ փոփոխականների հավաքագրումը Հայաստանում ՏՏԿԱՀ-ի միջոցով

ԵՄ նյութական զրկվածության ցուցանիշի համար պահանջվող տվյալների հավաքագրման նպատակով 2015 թ-ին իրականացվեց փորձնական հետազոտություն: Փորձնական հետազոտությունից հետո 2016 թ-ին ՏՏԿԱՀ –ի տվյալների հավաքագրման հարցաթերթիկի մեջ ավելացվեց սոցիալական բացառումների մոդուլը: Հիմնական հարցաթերթիկում որոշ փոփոխականների համար նաև ավելացվեց պատասխանների նոր կատեգորիա <<Ոչ, չենք կարող մեզ թույլ տալ>>, որպեսզի հնարավոր լինի հաշվելու տվյալ առարկայի հարկադրված բացակայությունը:

Բոլոր փոփոխականները, որոնք անհրաժեշտ են ԵՄ –ի ՆԶ-ն հին և նոր ցուցանիշների համար հավաքագրվել են և առկա են եղել փորձագետներին տրամադրված տվյալներում: Տվյալները բաղկացած էին 2016 թ.-ի տվյալների ընտրված մասերից, տնային տնտեսությունների ֆայլ (5,184) և անհատական ֆայլ (19,259), որոնք կարող են կապակցվել միմյանց: Ընտրանքի կշիռները ներառման հավանականությունների հակադրություններ են եղել և օգտագործվել են վերլուծությունների մեջ: Սոցիալական բացառումների փոփոխականներում չեն եղել

չպատասխանված կետեր (չգիտեմ/չեմ ցանկանում պատասխանել): Ստուգվել են տվյալների ամբողջականությունը և ռեսպոնդենտների հետ կապ է հաստատվել անորոշությունների դեպքում: Սա լավ պրակտիկա է և բարելավում է տվյալների որակը:

Ինտերնետ կապի առկայությունը 2016 թ. հարցաթերթիկում առկա էր միայն տնային տնտեսության մակարդակում <<չենք կարող մեզ թույլ տալ>> տարբերակով: Անհատական մակարդակում միայն հարցը տրված էր ինտերնետ հասանելիության վերաբերյալ: Հետևաբար, ինտերնետ կապը սոցիալական բացառումների ցուցանիշներում օգտագործվել է որպես տնային տնտեսության մակարդակի փոփոխական: Նախատեսվում է, որ ԵՄ-ի նոր նյութական զրկվածության ցուցանիշը (13 կետեր) ներառելու է ինտերնետ կապը անհատական մակարդակում: 2017 թ. Հայաստանի ՏՏԿԱՀ հարցաթերթիկը արդեն իսկ ունի նոր հարցեր ինտերնետի հասանելիության վերաբերյալ անհատական մակարդակում, որը կարող է օգտագործվել, երբ տվյալները առկա լինեն:

Հայաստանի ՏՏԿԱՀ հարցաթերթիկում ավելացված հարցերից մեկը ներառում է <<ծայրը ծայրին հասցնել>> հարցը, որը նյութական զրկվածության ցուցանիշի մաս չի համարվում, սակայն խիստ փոխկապակցված է զրկվածության ներքին կառուցվածքին: Այս փոփոխականը մասամբ կարող է օգտագործվել գնահատելու նյութական զրկվածության փոփոխականի վավերականությունը: Հայաստանի համար ԵՄ-ՆՁ ցուցանիշների պարզ խաչաձև աղյուսակավորումը <<ծայրը ծայրին հասցնելու>> հարցով տալիս է խոստումնալից և հավանական արդյունքներ: Սակայն դժվարություններ ունեցող տնային տնտեսությունների տոկոսը բավականին բարձր է: Այս <<ծայրը ծայրին հասցնելու>> հարցը պետք է պահպանվի ՏՏԿԱՀ հարցաշարում, դա կարող է օգտագործվել առանձին և վավերացման նպատակներով:

Գծապատկեր. <<ծայրը ծայրին հասցնել>> փոփոխականի բաշխումը, Հայաստան, ՏՏԿԱՀ 2016 թ, բնակչության տոկոսը:



Բնակչության մասնաբաժինը, որոնք տնային տնեսություններում դժվարանում են ծայրը ծայրին հասցնել (3 կատեգորիաներում միասին) այստեղ տոկոսը բավականին ավելի բարձր է քան Եվրոպական Միության միջինը, բայց միևնույն բարձր մակարդակի վրա է գտնվում ինչպես օրինակ Սերբիան ու Հունաստանը:

Գծապատկեր. Բնակչության մասնաբաժինը, որոնք դժվարություններով են ապրում տնային տնտեսություններում և ունեն ծայրը ծայրին հասցնելու խնդիր, ընտրված երկրներ ԵՄ- ԵԿՊՎ 2015 թ. և Հայաստանը 2016 թ.-ին:



Աղբյուրը. Եվրոստատի տվյալների բազայի աղյուսակ, ILC_MDDD11 և ՏՏԿԱՀ

Վավերականության գնահատման առումով, փորձագետներն առաջարկում են ԵՄ-ՆԶ –ն ցուցանիշները բացի <<ծայրը ծայրին հասցնելու>> տվյալներից վավերացնել նաև այլ առկա տեղեկատվության հետ համեմատելով, որը փոխկապակցված կլինի նյութական զրկվածության հետ: Նման տեղեկատվություն կարող են հանդիսանալ օրինակ եկամուտի և սպառման վրա հիմնված աղքատության ցուցանիշները: Քանի որ տվյալները նախնական բնույթ են կրում, փորձագետները այս առաքելության ընթացքում հասանելիություն չեն ունեցել եկամուտի կամ սպառման տվյալներին:

ԵՄ նյութական զրկվածության ցուցանիշները համարվում են բազմաչափ զրկվածության ցուցանիշներ: Պետք է նշել, որ բազմաչափ աղքատության ցուցանիշը, որը հատուկ կազմվել է Հայաստանի համար արդեն իսկ հրապարակվել է: Այս չափումը ունի շատ և միանգամայն տարբեր չափեր և ցույց է տալիս, որ Հայաստանում մարդկանց մոտավորապես 30 % բնակվում են բազմաչափ աղքատ տնտեսություններում: ՆԶ –ն զրկվածության շեմերը կամայական են իրենց բնույթով: Երբ վերլուծում ենք ԵՄ-ի ՆԶ –ն ցուցանիշների արդյունքները, զրկվածության մակարդակները բավականին բարձր են Հայաստանի բազմաչափ զրկվածության ցուցանիշի համեմատությամբ: Հետևաբար, ավելի հարմար ցուցանիշների կազմումը արդարացված կլինի տարածման համար, որտեղ կենտրոնացումը չի լինի միջազգային համադրությունների վրա:

ԵՄ- ՆԶ ցուցանիշի <<հին>> 9 կետերի հաշվարկը

ԵՄ-ի ՆԶ-ն հին ցուցանիշի համար բոլոր փոփոխականները հավաքագրվել են տնային տնտեսության մակարդակում: Հետևաբարև հաշվարկը պարզ է: Տնային տնտեսությունները կապակցվել են անհատական ֆայլերին, որտեղ ներառված են տնային տնտեսության անդամները և կիրառվել է տնային տնտեսության կշիռը: Բոլոր կետերի համար <<Ոչ, չենք կարող մեզ թույլ տալ>> կամ <<Ոչ>> պատասխանները գրանցված են որպես 1 և պատասխանների այլ կատեգորիաները գրացվում են որպես 0:

Զրկվածության ցուցանիշի պարտքերը բաղկացած են երեք փոփոխականներից (socex1_1 վարձակալություն կամ հիփոթեքային մարում/ socex1_2 կոմունալ ծախսեր/ socex1_3 ապառիկով ապրանքների գնման մարումներ), և տրվում է 1 արժեքը, եթե կան պարտքեր (մեկ անգամ, երկու անգամ կամ ավելին) այս երեք փոփոխականներից ցանկացած մեկով, հակառակ դեպքում արժեքը 0 է:

Զրկվածության փոփոխական հեռախոսը բաղկացած է երկու փոփոխականներից (c8_11 ֆիքսված հեռախոսակապ/ c8_12 բջջային հեռախոսակապ), արժեքը տրվում է 1, եթե տնային տնտեսությունում պատասխանը հարցերից որևէ մեկին եղել է <<Ոչ, չենք կարող մեզ թույլ տալ>>:

Տարբեր կոդեր են օգտագործվել լվածքի մեքենային, հեռախոսին և հեռուստացույցին վերաբերվող փոփոխականների համար (կոդ 3 <<Ոչ, չենք կարող մեզ թույլ տալ>> պատասխանի դեպքում, այլ փոփոխականներին տրվել է 2 կոդը):

Վերլուծությունների միավորները անհատ մարդիկ են, այլ ոչ թե տնային տնտեսությունները: Տնային տնեսությունների զրկվածության 9 փոփոխականներ (1/0 կոդավորմամբ) հետևաբար կապակցվել են անհատական ֆայլերին: Այլընտրանքային տարբերակ է նաև, որ անհատական և տնային տնտեսության ֆայլերը կարող են կապակցվել նախքան փոփոխականների վերակոդավորումը:

Զրկվածության ինը կետերի հանրագումարը այնուհետև ավելացվում է որպես լրացուցիչ փոփոխական տվյալների ցանկին: Աղյուսակավորումը կարելի է իրականացնել բոլոր շեմերով 1-9*: ԵՄ Նյութական զրկվածության* ցուցանիշը ստանում է 1 արժեքը, եթե զրկվածության հանրագումարը կազմում է առնվազն 3, հակառակ դեպքում արժեքը 0 է: Նմանապես, *ԵՄ խիստ նյութական զրկվածության* ցուցանիշը օգտագործում է առնվազն 4 զրկվածության շեմերը:

ԵՄ-ի ՆԶ ցուցանիշի <<նոր>> վերանայված 13 կետերի հաշվարկը

Նոր վերանայված ցուցանիշը պարունակում է փոփոխականներ, որոնք չափվում են անհատական մակարդակում 16 տարեկան և բարձր չափահասների համար: Սա բարդացնում է հաշվարկները, քանի որ զրկվածության փոփոխականները պետք է կազմվեն/իմպուտացվեն նաև երեխաների համար:

Եվրոստատը առաջարկել է երկու սցենարներ իմպուտացնելու համար անհատական զրկվածության փոփոխականները երեխաների համար: Առաջինի դեպքում, չափահասների միևնույն զրկվածության կետերը իմպուտացվում են երեխաների համար, երբ տնային տնտեսության մեջ չափահասներից ավելի քան կեսը չունեն տվյալ առարկան, այս դեպքում տվյալ տնային տնտեսությունում բնակվող երեխաները համարվում են տվյալ առարկայից զրկված: Երկրորդ մեթոդի դեպքում, երեխաները համարվում են զրկված, եթե նրանց մոտ բացակայում են տնային տնտեսության առնվազն երեք զրկվածության առարկաներ (այն յոթ տնային տնտեսության առարկաներից, որոնք ներառված են ցանկում), ի լրումն առաջին մեթոդի պայմանի:

Հայաստանի տվյալների համար կիրառվել են <<երեխաների զրկվածության իմուտացման>> երկու մեթոդներն էլ: Նախ, տնային տնտեսության մեծահասակների մեջ զրկվածություն ունեցողների մասնաբաժինը հաշվարկվել է բոլոր չափահաս անհատական զրկվածության փոփոխականների համար: Զրկվածության ինդեքսը տնային տնտեսության համար այնուհետև կառուցվել է տալով 1 արժեքը, եթե մասնաբաժինը կազմել է 0.5-ից բարձր: Այս ինդեքսը այնուհետև միավորվել է երեխաների հետ և օգտագործվել է երեխաների զրկվածության բացակայող արժեքների համար:

Միևնույն <<50 %>>-ի կանոնը կարող է կիրառվել նաև չափահասների համար, նրանց փաստացի անձամբ պատասխանների փոխարեն, որոնք կարող են պարունակել ներ-տնտեսության փոփոխականներ: Սույն առաքելության զեկույցում չափահասների զրկվածության փոփոխականները օգտագործվել են ինչպես դրանք ներկայացված են եղել տվյալներում: Եվրոստատում իրենց հաշվարկներում կարող էին օգտագործել տնային տնտսության մակարդակի ագրեգացված կետեր՝ անձամբ տրված պատասխանների փոխարեն: Այս կետը դեռևս ենթակա է ստուգման և պարզաբանման նախքան հաջորդ առաքելությունը: Գործնականում քիչ հավանական է, որ տարբեր մեթոդներ հանգեցնեն տարբեր արդյունքների:

Երկրորդ տարբերակով, լրացուցիչ պայմանը, որը կիրառվում է երեխաների համար, դա այն է, երբ նրանց տնային տնտեսության մեջ նույնպես բացակայում են տնային տնտեսության մակարդակի յոթ կետերից առնվազն երեքը: Առանձին զրկվածության կետերի փոփոխականներ կազմվել են տվյալներում դրանք արտացոլելու համար: Քանի որ ինտերնետ կապը առկա էր միայն որպես տնային տնտեսության փոփոխական, Հայաստանի տվյալների համար կիրառված պայմանը եղավ ութ կետերից երեքը:

ԵՀ Սոցիալական Պաշտպանության Հանձնաժողովի ցուցանիշների ենթախումբը (ՑԵ) աննշան նախապատվություն է տվել երկրորդ իմպուտացիոն մեթոդին: Հետևաբար, փորձագետները խորհուրդ են տալիս Հայաստանի համար նոր վերանայված ԵՄ-ՆԶ ցուցանիշների հաշվարկման ժամանակ նախապատվությունը տալ երկրորդ մեթոդին:

Նյութական զրկվածության նախնական արդյունքները ներկայացվել են ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցներին աշխատանքային փաստաթղթի տեսքով:

Նյութական զրկվածության չափումը երեխաների համար

Թեմատիկ ՆԶ-ն մոդուլը ներառվել է 2009 թ. ԵՄ Եկամուտի և կենսապայմանների վիճակագրության մեջ (ԵՄ-ԵԿՊՎ): Այս մոդուլը բաղկացած էր տնային տնտեսության առարկաներից, 16 տարեկանից բարձր չափահասների պարագաներից, ինչպես նաև կետերից, որոնք մասնավորապես կենտրոնացված էին երեխաների զրկվածության վրա (այսուհետ՝ <<երեխաներին բնորոշ կետեր>>):

2009 թ. –ի ԵՄ-ԵԿՊՎ մոդուլը ներառում էր կոնկրետ երեխաներին բնորոշ իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն: 2009 թ.-ի ԵՄ-ԵԿՊՎ-ի տվյալների առաջին խորը վերլուծություններում նույնականացվեցին երեխաների ՆԶ-ն օպտիմալ կետերը և առաջարկվեց երեխաների ՆԶ-ն ինդեքսը, որը պետք է կիրառվի ԵՄ անդամ պետությունների և Եվրոպական հանձնաժողովի կողմից: Երեխաների այս ՆԶ –ն կետերը այնուհետև կրկին ներառվեցին 2014թ. –ի ԵՄ-ԵԿՊՎ –ի զրկվածության և բարեկեցության ժամանակավոր մոդուլում, որը թույլ է տալիս իրականացնել լրացուցիչ վերլուծություններ Guio et al -ի կողմից (առաջիկայում):

2012թ. և 2016 թ.-ի վերլուծություններում փորձարկվել են երեխաների իրերի կայունությունը ԵՄ –ի մակարդակում և բոլոր Անդամ Պետություններում:

ԵՄ- ԵԿՊՎ-ում երեխաների կենսապայմաններին վերաբերվող տվյալները չեն հավաքագրվում հենց երեխաների կողմից, այլ տրամադրվում են այն չափահաս անձի կողմից, որը պատասխանում է <<տնային տնտեսության հարցաշարին>> (տնային տնտեսության ռեսպոնդենտ): Հետազոտության արձանագրության համաձայն, որին պետք է հետևեն երկրները, եթե տվյալ տնային տնտեսության մեջ երեխաներից առնվազն մեկը չունի տվյալ իրը (առարկան), ապա ենթադրվում է, որ տվյալ տնային տնտեսությանը պատկանող բոլոր երեխաների մոտ բացակայում է տվյալ առարկան: Իհարկե ցանկալի կլիներ իմանալ յուրաքանչյուր երեխայի առանձին զրկվածության մակարդակը տվյալ տնային տնտեսության մեջ, որը հնարավորություն կտար ուսումնասիրել երեխաների զրկվածության տարբերությունները յուրաքանչյուր տնային տնտեսության մեջ, ինչպես նաև տարբեր տնային տնտեսությունների միջև (օրինակ, միևնույն տնային տնտեսության մեջ աղջիկների մոտ է առավել զրկվածություն առկա, թե տղաների, կամ դեռահասներն են առավել զրկված, թե ավելի փոքր տարիքի երեխաները): Նման տեղեկատվության հավաքագրումը համարվում է բավականին զգայուն և այն նաև զգալիորեն առավել ծավալուն կդարձներ ԵՄ- ԵԿՊՎ-ի հարցաթերթիկը:

Հայաստանում երեխաների նյութական զրկվածության հարցերը տրվում են անհատապես յուրաքանչյուր երեխայի համար առանձին, կախված երեխայի տարիքից (1-17 կամ 6-17): Սա տարբերվում է ԵՄ- ԵԿՊՎ-ից, որտեղ երեխաներին վերաբերվող կոնկրետ հարցերը տրվում են տնային տնտեսության ռեսպոնդենտին՝ պատասխանելու համար տվյալ տնային տնտեսության բոլոր երեխաների համար: Օրինակ, ունեն արդյոք իրենց տարիքի համար համապատասխան գրքեր բոլոր երեխաները: Ավելին, ԵՄ-ԵԿՊՎ-ում հարցերը վերաբերվում են միայն տնային տնտեսության այն երեխաներին, որոնց տարիքը 16 տարեկանից ցածր է:
Երեխաների ՆԶ –ն չափման առարկաների թվում կան այնպիսիք, որոնք նույնական կամ նման են առաջարկված նոր (13 կետերին) ընդհանուր բնակչության ցուցանիշներին, որոնք հավաքագրվում են կամ տնային տնտեսության մակարդակով կամ չափահասների մակարդակով: Երեխաների ՆԶ-ն չափման համար Guio et al (2012)-ի կողմից առաջարկվող վերջնական ցանկը, հետագայում հաստատված Guio et al (2012)-ի կողմից (առաջիկայում), բաղկացած է 12 <<երեխաներին բնորոշ>> և 5 <<տնային տնտեսությանը բնորոշ>> կետերից:

1. Երեխա. Որոշ նոր հագուստներ (ոչ երկրորդ ձեռքից)
2. Երեխա. Երկու զույգ կոշիկներ
3. Երեխա. Թարմ մրգեր և բանջարեղեն օրեկան
4. Երեխա. Մսով, հավով կամ ձկնեղենով ընթրիք ամեն երկրորդ օրը
5. Երեխա. Համապատասխան գրքեր
6. Երեխա. Բացօթյա հանգստի սարքավորումներ
7. Երեխա. Սենյակային խաղեր
8. Երեխա. Ժամանցային միջոցառումներ

9. Երեխա. Ծնունդների, տոն օրերի տոնում և այլն
10. Երեխա. Հրավիրել ընկերներին
11. Երեխա. Դպրոցական ուղևորություններ
12. Երեխա. Շաբաթական արձակուրդ տանից դուրս
13. Տնային տնտեսություն. Փոխարինել մաշված կահույքը
14. Տնային տնտեսություն. պարտքեր
15. Տնային տնտեսություն/ահնատ չափահասների համար. Ինտերնետ
16. Տնային տնտեսություն. Համապատասխան տաք ջերմաստիճան տանը
17. Տնային տնտեսություն. Ավտոմեքենա

Երեխաների նյութական զրկվածության նախնական արդյունքները, որոնք հիմնված են 2016 թվականի առաջին կիսամյակի նախնական տվյալների վրա ներկայացվել են ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցներին աշխատանքային փաստաթղթի տեսքով:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

ԵՄ Նյութական Զրկվածության կետերը հաջողությամբ հավաքագրվել են 2016 թ.-ի ՏՏԿԱՀ –ի միջոցով որոշ ազգային կետերի հետ համատեղ՝ ներառյալ Երեխաների Զրկվածության մոդուլը: Տվյալների որակը բավականին բարձր է թվում: Հավաքագրված տվյալները համապատասխան են թվում այլ տվյալների ֆոնի հետ, ինչպիսիք են տնային տնտեսությունների ծայրը ծայրին հասցնելու կարողությունը: Հավաքագրված տվյալները տրամադրում են անհրաժեշտ տեղեկատվություն հստակ միջազգային համադրություններ կատարելու համար ինչպես ներկայիս, այնպես էլ ԵՄ ԵԿՊՎ-ի նյութական զրկվածության վերանայված ցուցանիշներով:

Որոշ նախնական աղյուսակներ ցույց են տալիս բարձր զրկվածության մակարդակ Հայաստանում: Նյութական զրկվածության ցուցանիշները կազմվել են Եվրոպական համատեքստում: ԵՄ ցուցանիշները, որոնք հաշվարկվել են ՏՏԿԱՀ ցուցանիշների հիման վրա համադրելի են Եվրոպական ցուցանիշների հետ, սակայն պարտադիր չէ, որ դրանք համապատասխան լինեն Հայաստանյան համատեքստում, քանի որ դրանք կարող են ենթադրել շատ բարձր զրկվածության մակարդակ, որը լավ չի համընկնի Հայաստանում այլ նյութական զրկվածության ցուցանիշների հետ: Սա պետք է հետագայում գնահատվի ՀՀ ԱՎԾ-ի կողմից և խրախուսվում է, որ ՀՀ ԱՎԾ-ն կազմի նոր ազգային ցուցանիշներ, որոնք այստեղ համապատասխան կհամարվեն Հայաստանի համար:

Վավերականությունը և ներքին համապատասխանությունը պետք է կանոնավոր կերպով ստուգվի անհատական առանձին նյութական զրկվածության կետերի համար՝ նախքան տվյալների հրապարակումը: Վավերականությունը կարող է ստուգվել օրինակ՝ օգտվելով խաչաձև աղյուսակավորումից դրանք այլ աղքատության ցուցանիշների հետ համեմատելով, ինչպիսիք են օրինակ տնային տնտեսությունների սպառման և եկամուտի մակարդակների համեմատումը նյութական զրկվածության հետ, ինչպես նաև ուրբանիզացիան:

Այն դեպքում, երբ եզակի նյութական զրկվածության արդյունքները այնքան էլ ճշմարտանման չեն թվում ՀՀ ԱՎԾ-ի համար, անհրաժեշտ է վերանայել հարցազրուցավարների փորձը՝ արդյունքների հետագա վավերացման համար: Անհրաժեշտության դեպքում կարելի է նաև վերանայել հարցազրուցավարների հրահանգները, սա ևս մեկ գործիք է վստահ լինելու համար, որ հարցերը ճիշտ են տրվել:

Համապատասխան աղյուսակների կազմումը ինչպես վերլուծությունների, այնպես էլ տարածման համար պահանջում է մեծ աշխատանք և տեխնիկական հմտություններ: Տնային տնտեսությունների հետազոտության բաժինը այս պահին ամբողջությամբ հենվում է ՏՏ վարչության մեկ կամ երկու մասնագետների հմտությունների վրա, որոնք էլ կազմում են համապատասխան աղյուսակները: Սա կարող է խստորեն հետաձգել աշխատանքները տվյալ աշխատակցի բացակայության պարագայում կամ այլ անսպասելի առաջադրանքների դեպքում: Հետևաբար, ՀՀ ԱՎԾ-ին առաջարկվում է ավելացնել ջանքերը գործնական ուսուցման և վերապատրաստման համար և տնային տնտեսությունների բաժնի աշխատակիցներին ուսուցանել հիմնական ծրագրավորման հմտությունները: Տեղում աշխատանքի ուսուցումը, որտեղ աշխատակիցները միասին կաշխատեն ՏՏ վարչության հետ աղյուսակների պատրաստման վրա կարող է լավ տարբերակ հանդիսանալ տնային տնտեսությունների բաժնում ՏՏ հմտությունների բարելավման համար:

2016 թ.-ի ՏՏԿԱՀ –ի տվյալները տրամադրել են բազմաթիվ հետաքրքիր արդյունքներ նյութական զրկվածության վերաբերյալ և ինչ-որ ձևով այդ արդյունքները պետք է տարածվեն 2017 թվականի ընթացքում: Այնուամենայնիվ, կարևոր է, որ ՀՀ ԱՎԾ-ն վստահ լինի, որ արդյունքները ճշմարիտ են և պատրաստ լինի մեկնաբանելու արդյունքները հրապարակումից հետո: Արդյունքները պետք է ուղեկցվեն որակի զեկույցներով, որտեղ կնկարագրվեն ընդգրկումը, վիճակագրական անորոշությունը և շեղումների ռիսկը, որոնք կարող են անդրադարձած լինել հրապարակված արդյունքների վրա, նման զեկույց արդեն իսկ գոյություն ունի ՏՏԿԱՀ-ի համար որպես ամբողջություն և կարող է վերաօգտագործվել:

Հետազոտության առաջին տարին կարելի է մասամբ համարել փորձնական, նկատի ունենալով, որ ՀՀ ԱՎԾ-ն վերլուծությունների ժամանակ կարող է գտնել որոշ կետեր, որոնք հուսալի չեն համարվում և անհրաժեշտ կլինի միայն մասամբ տարածել 2017 թ.-ի տվյալները, որին կհետևի հաջորդ տարիներին արդեն հետազոտության տվյալների ամբողջական հրապարակումը, երբ հետազոտությունը առավել բարելավված կլինի:

Նախքան հունիս ամսին կայանալիք հաջորդ առաքելությունը, ՀՀ ԱՎԾ-ն պետք է իրականացնի ԱԵ փորձագետների կողմից առաջարկվող ցուցանիշների վերլուծություն: ՀՀ ԱՎԾ-ն պետք է այս ժամանակահատվածում գնահատի արդյունքների վավերականությունը անհատական առանձին նյութական

զրկվածության առարկաների համար: Առաջարկվում է նաև, որ ներկայացվեն լավ ազգային շեմերի/ցուցանիշների գաղափարներ:

Հունիսին կայանալիք հաջորդ առաքելության ժամանակ հույս ունենք, որ ՀՀ ԱՎԾ-ն կարող է նաև ներկայացնել հրապարակման պլան armstatbank-ում և հնարավորության դեպքում նաև որևէ բաժին/գլուխ նյութական զրկվածության վերաբերյալ Աղքատության ազգային զեկույցում (<<*Հայաստանի Սոցիալական Պատկերը և Աղքատությունը*>>): Առաջարկվում է առաջին արդյունքները հրապարակել ոչ ուշ քան 2017 թվականի վերջը:

Առցանց ռեսուրսներ

ԵՄ – ԵԿՊՎ կայքը
http://ec.europa.eu/eurostat/web/income-and-living-conditions
ԵԿՊՎ աշխատանքային փաստաթղթերը նաև հասանելի են CIRCABC մեթոդաբանության մեջ, վերջին ձեռնարկների հետ մեկտեղ (DOC65):

Նյութական զրկվածությունը և մեթոդաբանությունը (հին ցուցանիշներ)
http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/EU_statistics_on_income_and_living_conditions_(EU-SILC)_methodology_-_material_deprivation_by_dimension

ԵՄ-ԵԿՊՎ տվյալների բազան
http://ec.europa.eu/eurostat/web/income-and-living-conditions/data/database

Գուիո, Գորդոն, Մարլիեր, *Նյութական զրկվածության չափումը ԵՄ-ում, ամբողջ բնակչության ցուցանիշները և հատուկ երեխաներին բնորոշ ցուցանիշներ*, Եվրոստատ, 2012 թ.
http://ec.europa.eu/eurostat/documents/3888793/5853037/KS-RA-12-018-EN.PDF

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք **ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15** **2017 թ. ապրիլի 3-7**

Բաղադրիչ 4. Աղքատության վիճակագրություն

Գործողություն 4.4: Տարեկան տվյալների արդյունքների վերանայում

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքները և չափանիշները

Պարտադիր արդյունքներ.

- Սոցիալական բացառումների ներդրված և հաշվարկված վիճակագրություն (2017թ. հուլիս)
-

Չափանիշներ.

- Նախագծվել է հարցաթերթ սոցիալական բացառումների փորձնական հետազոտության համար (2015թ. հոկտեմբեր)
- Իրականացվել է փորձնական հետազոտություն (2015թ. դեկտեմբեր)
- Հաշվարկվել են փորձնական արդյունքները (2015թ. դեկտեմբեր)
- Ներկայացվել է երեխաների համար սոցիալական բացառումների ցուցանիշների համակարգ (2017թ. հուլիս)
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմը վերապատրաստվել է սոցիալական բացառումների վիճակագրության հարցերի գծով (2017թ. հուլիս)

1. Գործողության նպատակը

- Տարեկան արդյունքերի վերլուծություն
- Տվյալների որակի ուսումնասիրում
- Հարցաթերթիկի ուսումնասիրում
- Ցուցանիշների նույնականացում
- Քննարկում հրապարակման և տարածման վերաբերյալ
- Համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավվում քննարկումներում

2. Գործողության սպասվող արդյունք

- Արդյունքները վերլուծվել են
- Որակը ստուգված է

- Հարցաթերթիկը ուսումնասիրված է
- Ցուցանիշնորը նույնականացված են
- Հրապարակման և տարածման ծրագիրը մշակված է
- Հաջորդ և վերջին գործողության համար աշխատանքային ծրագիրը պլանավորված է
    - Գործողություն 4.5 ծրագրված է 2017 թ. հունիսին (*հետևել ձեռքբերումներին և առաջարկություններ ապագային համար*)

3. Մասնակիցներ

<u>ՀՀ ԱՎԾ</u>

Բաղադրիչի ղեկավարներ

- Պրն Գագիկ Գևորգյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Տկն. Լուսինե Մարկոսյան, ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ

Այլ աշխատակիցներ

• Տկն Արմենուհի Առուշանյան, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության ՏՏ զարգացման բաժնի պետ, ՀՀ ԱՎԾ
• Տկն Աիդա Բաղալյան, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի առաջատար մասնագետ, ՀՀ ԱՎԾ
• Տկն Արուս Գալստյան, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի առաջին կարգի մասնագետ, ՀՀ ԱՎԾ
• Տկն Լաուրա Ավետիսյան, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի երկրորդ կարգի մասնագետ, ՀՀ ԱՎԾ
• Տկն. Դիանա Մարտիրոսովա, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին, ՀՀ ԱՎԾ

<u>ԱԵ փորձագետներ</u>

Պրն Յարլ Քուիթզաու, Փորձագետ, Դանիայի Վիճակագրություն
Պրն. Վելի –Մաթթի Տյորմելետո, Փորձագետ, Ֆինլանդիայի Վիճակագրություն

<u>Գործողությանը մասնակցող այլ շահագրգիռ կողմեր</u>

Ներկայացուցիչներ հրավիրված կլինեն հետևյալ կառույցներից՝

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ՀՀ կրթության և գիտության նախարարության
- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

Հավելված 2. Առաքելության ծրագիր

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երկուշաբթի, առավոտ *(3/4)*	Հյուրանոց /ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
Երկուշաբթի, կեսօրից հետո *(3/4)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Իրավիճակի գնահատում և **ՇԵ** կողմից ընթացիկ առաքելության ակնկալվող արդյունքների ներկայացում
Երեքշաբթի, առավոտ *(4/4)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Տարեկան արդյունքների վերլուծություն և տվյալների որակի ուսումնասիրում
Երեքշաբթի, կեսօրից հետո *(4/4)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Հարցաթերթիկի ուսումնասիրում և քննարկումներ բարելավման ենթակա հարցերի վերաբերյալ
Չորեքշաբթի, առավոտ *(5/4)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ցուցանիշների նույնականացում Հրապարակման և տարածման վերաբերյալ քննարկումներ
Չորեքշաբթի, կեսօրից հետո *(5/4)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Հրապարակման և տարածման վերաբերյալ քննարկումների շարունակություն Նախապատրաստվել շահառուների հետ հանդիպմանը
Հինգշաբթի, առավոտ *(6/4)*	ՀՀ ԱՎԾ / *դահլիճ*	Հանդիպում շահառուների հետ	Հանդիպում շահառուների հետ
Հինգշաբթի կեսօրից հետո *(6/4)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Վերջնական եզրակացությունների, ճանապարհային քարտեզի և առաքելության հաշվետվության նախապատրաստում
Ուրբաթ, առավոտ *(7/4)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ Չպլանավորված հանդիպումներ	**ԱԵ փորձագետների** բացահայտումների ներկայացում և ձեռքբերված եզրակացությունների համաձայնեցում Վեջնական պարզաբանումներ ԱԵ փորձագետների հետ, հաշվետվության

			պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին
Ուրբաթ, կեսօրից հետո *(7/4)*	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ՇԵ ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ և առաջարկություններ հաջորդ գործողության համար և ՇԵ փորձագետների համար ենթադրվող աշխատանքային ծրագրի ներկայացում

Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ

ՀՀ ԱՎԾ

- Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
- Գագիկ Գևորգյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Լուսինե Մարկոսյան, տնային տնտեսությունների բաժնի պետ
- Դիանա Մարտիրոսովա, ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների բաժին
- Աննա Ամրոյան, ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների բաժին
- Արուս Գալստյան, տնային տնտեսությունների բաժին
- Լաուրա Ավետիսյան, Տնային տնտեսությունների բաժին
- Արմենուհի Առուշանյան, ՏՏ զարգացման բաժին

Արտաքին շահառուներ

- Լուսինե Երեմյան, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ

ԹՄԽ աշխատակազմ

- Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգի մշտական խորհրդատու
- Լիանա Աթոյան, ԹՄԽ օգնական
- Անուշ Պողոսյան , ԹՄԽ թարգմանիչ